ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագրով նախատեսված՝ ՀՀ ԿԱ ՀՊԾ-ի կողմից կատարման ենթակա միջոցառումների ընթացքի վերաբերյալ

ՀՀ կառավարության 2003 թվականի նոյեմբերի 6-ի թիվ 1522-Ն որոշմամբ հաստատված ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման միջոցառումների ծրագրով նախատեսվել են մի շարք միջոցառումներ, որոնց կատարման պատասխանատու է ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայությունը: Մասնավորապես՝

1. Ծրագրի 4.6 կետով նախատեսված է կրճատել օրենսդրությամբ սահմանված տարբեր հարկային արտոնությունները՝ տարաբնույթ մեկնաբանությունների և չարաշահումների բացառման նպատակով: Այդ նպատակով ՀՀ ԿԱ ՀՊԾ կողմից գույքագրվել են հարկային օրենսդրությամբ գործող բոլոր արտոնությունները և 2004 թվականի օգոստոսի 10-ին ներկայացվել են ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն՝ պատրաստակամություն հայտնելով ներկայացնել նաև հարկային արտոնությունների վերանայման վերաբերյալ կոնկրետ առաջարկություններ: Ճիշտ է ֆինանսական այս տարում հարկային արտոնությունների կրճատման օրենսդրական նախաձեռնություններ ՀՀ Ազգային ժողով չեն ներկայացվել, սակայն դրանց կրճատման ուղղությամբ միջոցառումներ են նախատեսված ՀՀ կառավարության և Արժույթի միջազգային հիմնադրամի միջև 2005-2008 թվականների հարկային և մաքսային բարեփոխումների միջոցառումների ծրագրում: Այսպես, այդ ծրագրով նախատեսված է երկարաձգել «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված հարկային ստուգումների արդյունքում հարկային պարտավորությունների առաջադրման 3 տարվա վաղեմության ժամկետը, վերանայել «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված գյուղատնտեսության ոլորտի համար արտոնությունները, վերացնել «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված արտարժութային եկամուտների մասով շահութահարկի արտոնությունը, նվազեցումների արգելքը, կենտրոնացված կարգով շահութահարկ վճարելու հնարավորությունը: Միաժամանակ, պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին օրենսդրությունում փոփոխությունների փաթեթի նախագծով նախատեսվել է, որ սոցիալական վճարների գծով տույժերից և տուգանքներից ազատումը իրականացվելու է միայն օրենքով:

2. Ծրագրի 4.7 կետով նախատեսված հարկերի հաշվարկման և վճարման մեխանիզմների հնարավորինս պարզեցման, հարկ վճարողների իրավունքների և պարտականությունների հստակեցման, առկա հակասությունների վերացման, հարկային

օրենսդրության կայունության ապահովման, ինչպես նաև հարկային վարչարարության կատարելագործման նպատակով անհրաժեշտ է ունենալ հարկային օրենսգիրք: Հարկ է նշել, որ հարկային օրենսդրությամբ, մասնավորապես՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով, ամրագրվել է, որ ՀՀ հարկային օրենսդրության և հարկային հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերով սահմանված դրույթներում հակասությունների, երկիմաստությունների կամ տարընթերցումների առկայության դեպքում հարկման նպատակով այդ դրույթները մեկնաբանվում և կիրառվում են հարկ վճարողի օգտին: Ինչ վերաբերում է հարկային օրենսգրքի մշակմանը, ապա այդ նպատակով գործում է աշխատանքային խումբ, որտեղ ընդգրկված են նաև ՀՀ ԿԱ ՀՊԾ 7 ներկայացուցիչներ, որոնք մասնակցել են հարկային օրենսգրքի մշակման պատասխանատու աշխատանքային խմբի նիստերին: Հարկային օրենսգրքի նախագծի մշակման պատասխանատու է հանդիսանում ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը: ՀՀ ԿԱ ՀՊԾ-ն իր առաջարկություններն է ներկայացրել ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից մշակված «Հարկային օրենսգրքի ընդհանուր մասի նախագծի» վերաբերյալ: Ներկայումս հարկային օրենսգիրքը գտնվում է քննարկման փուլում, որի ընդունման համար, կարծում եմ, առնվազն երկու տարի է անհրաժեշտ:

3. Ծրագրի 4.8 կետով նախատեսվում է ընդլայնել քաղաքացիների գույքի եկամուտների հայտարարագրման բազան:

«Հայաստանի Հանրապետության իշխանության մարմինների ղեկավար աշխատողների գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետում 2004 թվականին հայտարարագրեր են ներկայացրել 42123 հայտարարատուներ: Օրենքի պահանջները խախտելու համար 2004 թվականին պատասխանատվության են ենթարկվել 1808 հայտարարատուներ՝ 6650,5 հազար դրամի չափով:

Նույն օրենքով սահմանված ժամկետում 2005 թվականին հայտարարագրեր են ներկայացրել 46648 հայտարարատուներ: Օրենքի պահանջները խախտելու համար 2005 թվականի ինն ամիսների ընթացքում պատասխանատվության են ենթարկվել 1655 հայտարարատուներ՝ 4869,5 հազար դրամի չափով:

Հայտարարագրերը սահմանված ժամկետներում չներկայացնելու համար նախատեսված է տուգանքի նշանակում՝ մինչև սահմանված նվազագույն աշխատավարձի 50-նապատիկը: Պատասխանատվության միջոցների կիրառման արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է կիրառել ավելի նշանակալի պատժամիջոցներ:

Գործող օրենքը հնարավորություն չի տալիս պարզել հայտարարագրերում արտացոլված ցուցանիշների արժանահավատությունը, օրինակ՝ երբ հայտարարագրվում են մեկ միլիոն ԱՄՆ դոլարը գերազանցող գույք կամ եկամուտ:

Հայտարարագրի հիման վրա հարկային պարտավորություններ առաջադրելու հնարավորություն գործող օրենքը չի ընձեռում:

Միաժամանակ քաղաքացիների գույքի և եկամուտների հայտարարագրման համակարգի ներդրման ՀՀ կառավարության կողմից հաստատված պետական ծրագիրը ենթադրում է հայտարարատուների շրջանակի հետագա ընդլայնում՝ բացի պետական ծառայողներից համակարգում ներգրավելով նշանակալի եկամուտներ ստացող անձանց:

Այդ խնդիրների լուծմանն ուղղված «Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է առաջին ընթերցմամբ: Նախագծի համաձայն հայտարարագրեր կներկայացնեն ինչպես պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում ծառայողները, այնպես էլ ամսական 400 հազար դրամից ավելի եկամուտ ստացող անձինք: Ի տարբերություն «Հայաստանի Հանրապետության իշխանության մարմինների ղեկավար աշխատողների գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» ՀՀ օրենքի, նախագծով նախատեսվում է հայտարարագիրը դարձնել ֆիզիկական անձանց հարկային պարտավորությունների հաշվարկման հիմք: Միաժամանակ օրենքի նախագծով հսկողության իրականացման հնարավորություն է ստեղծվում հայտարարագրերում ներառված տվյալների, ինչպես նաև հայտարարատուների գույքի կամ եկամուտների վերաբերյալ ստացված տեղեկությունների արժանահավատության նկատմամբ՝ՀՀ հարկային օրենսդրությամբ, «Հարկային ծառայության մասին» և ՀՀ այլ օրենքներով սահմանված կարգով: Նշված գործառույթը նախատեսվում է վերապահել հարկային մարմնին:

Հաշվի առնելով, որ արդեն տարին մոտենում է ավարտին, իսկ օրենքը կիրարկելու համար անհրաժեշտ կլինի ընդունել ՀՀ կառավարության մի շարք որոշումներ, այլ նորմատիվ իրավական ակտեր, իրականացնել կազմակերպչական միջոցառումներ՝ կարծում եմ ճիշտ կլինի «Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» ՀՀ օրենքը գործողության մեջ դնել 2007 թվականից:

4. Ծրագրի 4.9 կետով նախատեսվում է խստացնել հարկերից խուսափելու համար պատասխանատվությունը: Այդ նպատակով ՀՀ ԿԱ ՀՊԾ կողմից մշակվել է ՀՀ ԿԱ ՀՊԾ կողմից 29.10.2004 թվականին նախապատրաստվել և շահագրգիռ նախարարությունների համաձայնությամբ ՀՀ կառավարություն է ներկայացվել «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը

հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել է ՀՀ ԱԺ՝ նախագիծը համարվելով անհետաձգելի:

ՀՀ Ազգային ժողովի պետահիրավական մշտական հանձնաժողովի դրական եզրակացությամբ հարցը քննվել է ԱԺ 2005 թվականի գարնանային նստաշրջանում: Նիստի ընթացքում արվել են մի շարք առաջարկություններ, ինչի կապակցությամբ, լրամշակման նկատառումներով, հարցը քվեարկության չի դրվել:

ՀՀ Նախագահի կողմից ՀՀ կառավարության 25.08.2005 թվականի նիստի թիվ 34 արձանագրության 25-րդ կետի 3-րդ ենթակետով տրվել է հանձնարարական հարկային պարտավորությունների չկատարման դեպքում քրեական պատասխանատվության ուժեղացման վերաբերյալ, /հավաքը ՀՀ ԿԱ ՀՊԾ/: ՀՀ ԿԱ ՀՊԾ գրություն է ներկայացրել միայն ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարությանը կողմից, այն մասին, որ առաջարկություններ չունեն: ՀՀ գլխավոր դատախազությունը իր առաջարկությունները ուղարկել էր ՀՀ կառավարություն: ՀՀ ԿԱ ՀՊԾ-ն, ի կատարումն ՀՀ Նախագահի ՀՀ կառավարության 25.08.2005 թվականի նիստի թիվ 34 արձանագրության 25-րդ կետի 3-րդ ենթակետով տրված հանձնարարականի, ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացրել իր առաջարկությունները, օրենքի նախագիծը և հիմնավորում տեղեկանքը: Այնուհետև ՀՀ վարչապետի 29.09.2005 թվականի թիվ 072-5711 հանձնարարությամբ հանձնարարվել է, ի կատարումն ՀՀ կառավարության 25.08.2005 թվականի թիվ 34 արձանագրության 25-րդ կետի 3-րդ ենթակետի, մեկ անգամ ևս քննարկել նախագծերը սահմանված կարգով ներկայացնել առաջարկություն:

Ի կատարումն ՀՀ վարչապետի 29.09.2005 թվականի թիվ 072-5711 հանձնարարականի ՀՀ ԿԱ ՀՊԾ կողմից նախագիծը սահմանված կարգով դրվել է շրջանառության մեջ:

5. Ծրագրի 4.10 կետով նախատեսված հարկատուների իրավունքների պաշտպանության մեխանիզմների կատարելագործման նպատակով «Հարկերի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությամբ սահմանվել է, որ ՀՀ հարկային օրենսդրության և հարկային հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերով սահմանված դրույթներում հակասությունների, երկիմաստությունների կամ տարընթերցման դեպքում դրա վերաբերյալ պաշտոնական պարզաբանում ստանալու նպատակով հարկ վճարողը սահմանված կարգով կարող է դիմել հարկային մարմին: Այդ պաշտոնական պարզաբանումների հրապարակվում են «ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի» պաշտոնական տեղեկագրում:

Միաժամանակ, «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքում կատարվել են համապատասխան փոփոխություններ, որոնք գործում են 2004 թվականի հունվարից: Օրենքում կատարված փոփոխությամբ սահմանվել են հարկային ծառայողների գործողությունների կամ անգործության բողոքարկման ընթացակարգերը, գանգատարկման հանձնաժողովի կազմը, դիմում-գանգատի քննարկման կարգը և ժամկետները, մասնավորապես, նախատեսվել է, որ գանգատարկման հանձնաժողովի նիստին կարող են մասնակցել դիմում-գանգատ ներկայացրած անձը կամ նրա լիազորված անձը, դիմում-գանգատի վերաբերյալ հանձնաժողովի կայացրած որոշումը:

2004թ. ընթացքում Ծառայության գանգատարկման հանձնաժողովի կողմից քննության է առնվել 145 բողոք, որից բավարարվել է 32-ը, իսկ 2005թ. ինն ամիսների ընթացքում գանգատարկման հանձնաժողովի կողմից քննարկվել է ..... բողոք, որից բավարարվել է՝ ..... -ը:

6. Ծրագրի 4.11-րդ կետով նախատեսված՝ ՀՀ ԿԱ ՀՊԾ ներքին վերահսկողության ուժեղացման նպատակով ՀՀ ԿԱ ՀՊԾ վերահսկողության վարչության կողմից պարբերաբար ընդհանրացվում և ՀՀ ԿԱ ՀՊԾ պետին են ներկայացվում համակարգում իրականացվող ծառայողական քննությունների արդյունքները, հարկային տեսչությունների կողմից սպասարկվող տարածքներում բացահայտված ապօրինի ձեռնարկատիրության դեպքերի փաստերը և հարկային մարմնի ներքին վերահսկողությանն առնչվող այլ ցուցանիշներ: Այսպես, 2005թ. ինն ամիսների ընթացքում անց է կացվել 6 համալիր ստուգում՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի 2-ի դիմաց, ապօրինի գործունեության հայտնաբերման 540 ստուգում (հայտնաբերվել է 78.5 մլն դրամի գումար), 26 վերստուգում (հայտնաբերվել է շուրջ 130 մլն դրամի գումար), իրավապահ մարմինների պահանջով 50 ստուգում: Բացի այդ, տարածքային հարկային մարմինների հարկային ծառայողների պաշտոնական դիրքի չարաշահումների բացահայտման նպատակով իրականացվել է 29 ծառայողական քննություն, որոնց ընթացքում եզրակացությունների հիման վրա պատասխանատվության է ենթարկել 95 հարկային ծառայող, այդ թվում՝ երկուսն ազատվել են աշխատանքից: Այդ ցուցանիշները հրապարակվում են հարկային մարմնի ղեկավարի մամուլի ասուլիսների կամ ԶԼՄ-ների ներկայացուցիչների հետ ՀՀ ԿԱ ՀՊԾ պետի հանձնարարությամբ ՀՀ ԿԱ ՀՊԾ պետի տեղակալի կամ վերահսկողության վարչության պետի հանդիպումների ընթացքում: Հարկային մարմնի ղեկավարի համապատասխան հրամաններով պարտադիր քննարկման առկա են դառնում հարկային ծառայողների՝ դատարանի կողմից հաստատված անգործության փաստերը, ինչպես նաև ի վնաս հարկային մարմնին կայացված դատական ակտերը:

Հարկ է նշել, որ հարկային մարմինն իր աշխատանքների թափանցիկության և հրապարակայնության ապահովման նպատակով հրապարակել է տարեկան արդյունքներով հարկային վնասներ հայտարարագրած և ապառքներ կուտակած հարկ վճարողների ցանկերը, ինչպես նաև եռամսյակային արդյունքների կտրվածքով 300 խոշոր հարկ վճարողների ցանկը և նրանց կողմից ֆինանսական տարվա սկզբից վճարված հարկերի մեծությունները: Միաժամանակ, ՀՀ Ազգային ժողովում քննարկվում են ՀՀ ԿԱ ՀՊԾ-ի կողմից մշակված «Հարկերի մասին» և «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» ՀՀ օրենքներում փոփոխությունների նախագծերը, որոնցով նախատեսվում է ի լրումն հրապարակվող տեղեկությունների հարկ վճարողների վերաբերյալ հրապարակել լրացուցիչ տեղեկություններ, մասնավորապես՝ հաշվետու տարվա արդյունքներով ՀՀ պետական բյուջե 50 մլն դրամ և ավելի շահութահարկ վճարած հարկ վճարողների, 1 մլն դրամ և ավելի շահութահարկ վճարած բանկերի, 3 մլն դրամ և ավելի եկամտահարկ վճարած հարկային գործակալների, շահութահարկի հիսուն և հարյուր տոկոս նվազեցման արտոնությունից օգտվող օտարերկրյա ներդրումներով ռեզիդենտ կազմակերպությունների, 3 մլն դրամ և ավելի պարտադիր սոցիալական ապահովագրության վճար վճարած, լրացուցիչ աշխատողներ հայտարարագրած ապահովադիրների, ձևակերպված աշխատողների միջին ցուցակային թվերի վերաբերյալ տեղեկությունները: